ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐԸՆԾԱ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻՆ

Հուլիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորընծա Տ. Արշեն վարդապետ Սանոսյանին, Տ. Թորգոմ վարդապետ Տոնիկյանին և Տ. Մարկոս վարդապետ Հովհաննիսյանին, ովքեր, հունիսի 25-ին հաջողությամբ պաշտպանելով վարդապետական իրենց թեզերը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ստացել էին մասնավոր վարդապետության աստիճան:

Նորընծա վարդապետներին Նորին Սրբությանը ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու հորդորը:

Նորին Սրբությունը, իր հայրական սերը և օրհնությունը փոխանցելով նորընծաներին, նախ իր գնահատանքը հայտնեց քննիչ հանձնաժողովին՝ կատարված աշխատանքի համար: Դիմելով վարդապետներին՝ Հայոց Հայրապետը մասնավորապես ասաց. «...Մենք բարձր ենք գնահատում ձեր սերը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատավոր ժողովուրդը: Վստահ ենք, որ այս վարդապետական աստիճանի շնորհումը առավել ևս պիտի ձեր մեջ զորացնի նախանձախնդրությունը և կամքը՝ օգտակար ծառայություն բերելու մեր ժողովրդին: Մենք անհուն ուրախություն ենք ապրում նման առիթներով, երբ մեր կուսակրոն հոգևորականները գալիս են համալրելու շարքերը մեր վարդապետաց...»:

Վեհափառ Հայրապետը նաև նշեց, որ այսօր մեր Եկեղեցին կանգնած է բազում ծանր մարտահրավերների առջև, և վստահություն հայտնեց, որ նորընծա վարդապետներն իրենց անմնացորդ նվիրումով, զորացյալ հավատով և ծառայությամբ պիտի նպաստեն դրանց հաղթահարմանը:

Հավարտ հանդիպման Նորին Սրբությունը նորընծա վարդապետներին շնորհեց վարդապետական լանջախաչեր:

Հանդիպմանը ներկա էր Վարդապետական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ